

# ԸՇ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գ/ա կենտրոնում

Ա.թ. հուլիսի 7-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի և ավստրիական «ԳԵԵԿՈ ԻՆՏ.» ընկերության միջև կնքվեց համագործակցության պայմանագիր:

Պայմանագրի շրջանակներում ավստրիական ընկերության ներդրումային ծրագրի միջոցներով նախատեսվում է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում կազմակերպել գեղարարական և սննդային նշանակության բուսական յուղերի, լուծանգվածքների, եթերայուղերի արտադրություն:

Պայմանագիրը ստորագրեցին ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի տնօրեն Ավետիս Ծատուրյանը և «ԳԵԵԿՈ ԻՆՏ.» ՍՊԸ-ի տնօրեն Արիս Սեդրակյանը:

...

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում ստացվել է կաթնաթթվային բակտերիաների նոր շտամ, որը թույլ է տալիս բարձրացնել սառնարանային պայմաններում պահպանվող մսամթերքի կենսաամփոփանցությունն ու երկարացնել պահպանման ժամկետն առանց զգալունաբանական բնութագրի՝ համի, հոտի, տեսքի որևէ փոփոխության:

«Մեր կողմից անջատվել է կաթնաթթվային բակտերիաների նոր շտամ՝ ներօժտված ջրածնի պերօքսիդի կենսասինթեզի բարձր ակտիվությամբ: Ստացված մանրէները համեմատաբար ավելի փոքր քանակություններով թույլ են տալիս բարձրացնել սառնարանային պայմաններում պահպանվող մսամթերքի կենսաամփոփանցությունն ու երկարացնել պահպանման ժամկետն առանց նրանց զգալունաբանական բնութագրի որևէ փոփոխության»,- ասաց գիտական խմբի ղեկավար, կենտրոնի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յուրայա Յովհաննիսյանը:

Հետազոտության արդյունքները ներկայացվել են միջազգային հետևյալ գիտաժողովներում: Աշխատանքի լայնածավալ տարբերակն ուղարկվել է տպագրության ազդեցության բարձր գործակից ունեցող, SJR ցանկում ընդգրկված հեղինակավոր «AMB Express» ամսագիր:

Հետազոտական աշխատանքներին մասնակցել են կենսաբանական գիտությունների թեկնածուներ Լուսինե Դանիելյանը, Անդրանիկ Բարսեղյանը և ասպիրանտ Էլեն Գաբրիելյանը:

**ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին**